

63(47.925)

3-94

30 JUL 2010

Հ. Ս. Խ. Հ.
ՀՈՂԺՈՂԿՈՄՄԱՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԵՆՏՈՐ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1933 ԹՎԻ ԲԵՐՔԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ



1. Գյուղատնտեսության մշակույթների վրա դիտողությունն սկսվում է աշնանացանը դարնան ձյան տակից դուրս գալուց և տևում է մինչև նոր աշնանացանը ձյան տակ մտնելու մոմենտը:

2. Բոլոր բույսերի նկատմամբ, բոլոր ժամկետներին, դիտողությունը կատարվում է ըստ առանձին սեկտորների (խորհրդային, քաղաքամերձ, հիմնարկների, կոլեկտիվ և անհատական տնտեսությունների համար առանձին-առանձին):

3. Բերքի վրա դիտողությունը կատարվում է բոլոր բույսերի և բազմամյա տունկների նկատմամբ, վորոնք նշված են ձևի № 2 հանվետվության թերթիկի մեջ:

4. Բերքի վրա դիտողություն կատարելը պարտադիր է բոլոր սեկտորների համար:

5. Բերքի վրա դիտողությունը կատարվում է 15 օրը մեկ անգամ, սկսած մայիսի 15-ից, այն էլ յուրաքանչյուր ամսվա 15-ին և 30-ին:

Մինչև այս կամ այն բույսի բերքահավաքի սկիզբը սպասվող միջին բերքը և ընդհանուր արտադրանքը վորոշվում է դաշտում, վորի հիման վրա և կազմվում է հանվետվության թերթիկը: Մասսայական բերքահավաքի ժամանակ հանվետվությունը արվում է համաձայն փաստացի միջին բերքի և ընդհանուր արտադրանքի:

6. Բերքատվության ավյախները (ձևի № 2), սույն հրահանգի հինգերորդ կետում նշած ժամկետներում, ներկայացնելու կարգը սահմանվում է հետևյալ կերպ:

63(47.925)

ա) սովխողը պարտավորվում է դիտողության արդյունքները ներկայացնել շրջնողբաժնին և իր տրեստին:

բ) Մ.Տ.Կ-ի դիրեկցիան շրջնողբաժնին ներկայացնում է առանձին կոլխոզների տեղեկանքները և նրանց ամփոփումն ըստ ամբողջ Մ.Տ.Կ-ի: Միաժամանակ ամփոփումն ուղարկում է սրակասորկենտրոնին:

գ) կոլխոզները և գյուղխորհուրդի ագրոլիազորները տեղեկանքները ներկայացնում են գյուղխորհրդին: Այն կոլխոզները, վարոնք սպասարկվում են Մ.Տ.Կ-ի կողմից, նրանք տեղեկանքները ներկայացնում են նաև Մ.Տ.Կ-ին:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.— Կոլխոզները միայն համայնացրած ցանքի խոտհարքների, ծառատունկերի բերքի տեղեկանքն ներկայացում են գյուղխորհրդին, իսկ գյուղխորհրդի ագրոլիազորները տեղեկանքներ ներկայացնում են անհատական սեկտորի նկատմամբ:

դ) գյուղխորհուրդները տեղեկանքներ ներկայացնում են շրջնողբաժնիներին այն կոլխոզների մասին, վորոնք չեն սպասարկվում Մ.Տ.Կ-ի կողմից, ինչպես և ագրոլիազորների տվյալների ամփոփումը անհատական սեկտորի մասին:

ե) շրջնողբաժնիներն ամբողջ շրջանի տեղեկություններն ըստ սեկտորի և կուլտուրաների ստուգելուց և ամփոփելուց հետո արդյունքները հեռադրով յուրաքանչյուր ամսի 15-ին և 30-ին հաղորդում են հողժողովմատի հանձնարման սեկտորին և նույն ժամկետներին ամփոփման նյութերը փոստով ուղարկում են Հողժողովմատ:

7. Դաշտային կուլտուրաների, բանջարանոցների, խոտհարքների և ծառատունկների միջին բերքը մեկ հեկտարից և ամբողջ արտադրանքը վորոշելիս, ընդհանուր տարածությունները, բոլոր ժամկետներում, պետք է լինի միևնույնը այն է՝

ա) աշնանացան հացաբույսերի տարածությունը պիտի ընդունել աշնանը կատարած փաստացի ցանքսը, դուրս յեկած ձըմբան ընթացքում փչացած տարածությունը, իսկ գարնանացանի նկատմամբ գարնան փաստացի ցանած տարածությունը, այսպես որինակ, յեթե սովխողը կամ կոլխոզը աշնանը ցանել է 1000 հեկտար, վորից ձմռան ընթացքում փչացել է 100 հեկտար, այդ դեպքում վերոհիշյալի համաձայն մեկ հեկտար բերքը և ընդհանուր արտադրանքը վորոշելիս բոլոր ժամկետների տեղեկությունները պետք է հանվի առնել 900 հեկտար, նույնիսկ այն դեպքում,

յեթե գարնան կամ ամրան ընթացքում այդ 900 հեկտարի մի մասը փչացած լինի կարկտից, սելավից, վնասատուներից և այլն:

Նույնպես պետք է վարվել նաև գարնանացանի տարածություններին նկատմամբ, այսինքն գարնան և ամրան ընթացքում փչացած տարածությունները նկատի չպիտի առնել, այլ միևնույնպիսի հանվել գարնանը ցանած փաստացի տարածությունները:

Բաղմայա խոտացանքսերի և բնական խոտհարքների տարածությունները հանվելիս պետք է հանվել այն տարածությունները, վորոնք պլանով թողնված են այս տարի խոտհարքի համար: Այսպիսով, բերքատվության դիտողության տվյալներում, բոլոր ժամկետների նկատմամբ տարածությունները պետք է լինեն անփոփոխ, այսինքն միևնույնը:

8. Մինչև այս կամ այն բույսի բերքահավաքի սկիզբը, բերքի վրա դիտողություն կատարող անձնավորությունը վորոշում է բույսից ստացվող բերքի քանակը մեկ հեկտարից և ընդհանուր արտադրանքը, նկատի ունենալով բույսի դրուժյունը տվյալ ժամկետին: Իսկ մասնայական բերքի ժամանակ վորոշվում է փաստացի միջին բերքն ու ընդհանուր արտադրանքն այս կամ այն կուլտուրայի համար, հիմք ունենալով կարման արդյունքները:

9. Բերքի վրա դիտողություն կատարող անձնավորությունը (գյուղատնտեսը, բրիգադիրը, ագրոլիազորը և այլն), արդյունքները տալու նախորդակին, պիտի անձամբ այցելի իրեն հանձնարարված հողամասերն ու ծառատանը և վորոշի, թե տվյալ ժամկետում ինչ քանակի բերք է սպասվում յուրաքանչյուր կուլտուրայի մեկ հեկտարից առանձին և իրեն հանձնարարած ամբողջ տարածությունից միասին: Այդ տվյալները նա գրանցում է ձեզ № 4 ա թերթիկում:

10. Նախորդ կետում (իններորդ կետում) նշած տեղեկությունները գումարվում են ըստ սեկտորների ու գրանցվում են ձեռք № 2 թերթիկում ըստ առանձին սեկտորների Յուրաքանչյուր սեկտորի պես (սովխողի դիրեկտորը, կոլխոզի վարչության նախագահը, գյուղխորհրդի նախագահը, շրջնողբաժնի վերջնակապես ստուգում է ստացվելիք բերքի չափն ու ընդհանուր արտադրանքն ըստ կուլտուրաների և հարկ յեղած դեպքում, համաձայն իր կամ ագրոնոմի դիտողությունների, համապատասխան սյունյակում («միջին բերքը մեկ հեկտարից ըստ գյուղխորհրդի նախագահի կամ գյուղատնտեսի» վերնագիր ունեցող սյունյակում) ուղղումներ է ժողովում և ստորագրում: Ուղղումներ մտցնելիս յը-



կատի պիտի ունենալ, վոր սխալ տեղեկություններ տալու համար նա պատասխանատու չի, վորպես խորհրդային իշխանությանը խաբող:

11. Ստացված տեղեկություններն ստուգելու և բերքատվությունը ճիշտ վորոշելու նպատակով, յուրաքանչյուր սովխոզ, կոլխոզ, Մ.Տ.Կ-ն և գյուղխորհուրդ ձեռք ձեռքի տվյալներն ըստ ժամկետների գրանցում և № 4 ձեռքի մեջ: Յուրաքանչյուր նոր ժամկետի ձեռք ձեռքի տվյալները նախ քան հաստատելը սեկտորի ղեկավարը տվյալները համեմատում և նախկին ժամկետների արվյալների հետ (վորը գրանցվում և ձեռք ձեռքի տվում):

ԲԵՐՔԻ ՎՐԱ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ՑԱՆՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

12. Յուրաքանչյուր սեկտոր պարտավոր և բերքի վրա դիտողություն կատարելու համար նշանակել հատուկ բանիմաց անձնավորություն:

Բերքի վրա դիտողություն կատարելու աշխատանքը սովխոզներում հանձնարարվում և ազրոնոմներին ըստ գյուղատնտեսական միավորների կամ ճյուղերի: Կոլխոզներում դիտողությունները հանձնարարվում և բերքագրիչներին, իսկ անհատական սեկտորում գյուղխորհրդի կողմից նշանակված հատուկ վստահելի և բանիմաց ազրոլիազրոններին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն շրջաններում, վորտեղ կոլխոզները սպասարկվում են Մ.Տ.Կ-ի կողմից, վերջինս իր ազրոնոմներին կցում և համապատասխան յենթաշրջաններին: Այդ ազրոնոմն ամբողջ ամսվա ընթացքում պարտավոր և կոլխոզներին հրահանգելու բերքատվությունը վորոշելու խնդիրների մասին: Նա պատասխանատու չի դիտողությունը ժամանակին կատարելու համար և բացի այդ պիտի ստուգել ստացած նյութերն ու տա իր յեզրակացությունն այդ մասին:

13. Վորպեսզի հնարավոր լինի դիտողությունն ավելի ճիշտ կատարել, արհրաժեշտ և տվյալ սեկտորին պատկանող տերիտորիան բաժանել 2 մասի, այն և շրովի և անշրովի: Բացի այդ, նախորոք պետք և վորոշվի յուրաքանչյուր դիտողություն կատարող անձնավորության տերիտորիան և նրա վրա ցանված մշակույթների տարածությունը:

14. Ինչպես վերևն ասված է, բուսականության բերքի վրա

դիտողությունը կատարվում է ամիսը յերկու անգամ, այն և յուրաքանչյուր ամսի 15-ին և 30-ին:

Այդ դիտողության արդյունքները գրանցվում են ձեռք ձեռքի տվյալներում և 4 և 4ա տետրերում, վորից հետո տվյալների գումարները փոխանցվում են ձեռք ձեռքի տվյալների մեջ:

Ձեռք ձեռքի տվյալները կազմիկուց հետո յուրաքանչյուր սեկտորին իրավունք է վերադարձվում համապատասխան սյունակում ուղղումներ կատարելու, յեթե դիտող անձի կողմից կատարված կամ արձանագրված դիտողությունը բերքատվության վերաբերյալ չի համապատասխանում իրականության:


Ձեռք ձեռքի տվյալների մեջ համապատասխան ուղղումներ կատարելուց հետո շտապ կարգով այդպիսին ուղարկվում և տվյալ շրջանի հոդրաժնին, այն հանվով, վոր վերջինս ստանա վոչ ուշ քան ամսի 15-ին և 30-ին:

15. Շրջանի կենտրոնից խոշոր հեռավորության վրա գտնվող գյուղխորհրդին, սովխոզին և կոլխոզին իրավունք է տրվում (շրջհոդրաժնի հայեցողությամբ) դիտողությունը կատարելու մի քանի օրով շուտ (որինակ 15-ի և 30-ի փոխարեն կատարել 13-ին և 27-ին) այն հանվով, վոր տվյալները հոդրաժնի ստանա 15-ին և 30-ին:

16. Յեթե այս կամ այն սեկտորի, գյուղատնտեսական մշակույթների բերքի վրա դիտողություն կատարող անձնավորությունը հնարավորություն չի ունենում, նշված ժամկետին, ուսումնասիրելու իրեն յենթակա բոլոր հողամասերը, այդ դեպքում համապատասխան սեկտորի կողմից նշանակվում են դիտողի ոգնականներ, վորոնք իրենց դիտողության արդյունքների մասին ղեկուցում են հիմնական դիտողություն կատարող անձնավորության:

17. Յեթե սահմանված ժամկետին գյուղխորհրդին և ՄՏԿ-ի տեղեկության արդյունքները չեն նեկայացվում, գյուղխորհրդի և ՄՏԿ-ի կողմից ձեռք են առնվում համապատասխան միջոցներ, պարզելու համար ժամկետի խախտման պատճառները, պատասխանատույան են յենթարկվում այդ խնդրում մեղավոր հանդիսացող անձնավորություններին և միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի հետագայում նման դեպքեր տեղի չունենան: Գործին նույնպիսի մոտեցում պիտի ունենա նաև շրջհոդրաժնի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե ազրոլիազրոններից մեկն ու մեկը նշված ժամկետին գյուղխորհրդին չի ներկայացնում բերքատվության վերաբերյալ տեղեկանքները, իբրև բացա-



ՀԱՅԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ուղթյուն գյուղխորհրդի նախագահը ձև № 2-ում ինքն լրացնում է հերկայացրած մասի սովյալները, համաձայն իր տեղեկութունների և սովյալների:

18. Մեկ հեկտար բերքատվության չափը վորոշվում է մինչև 0,1 ցենտներ ճշտությամբ:

19. Շրջնողրածիները պարտավոր են բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի սույն աշխատանքների հենց սկզբին, բոլոր գյուղխորհրդները, կոլխոզներն ու սովխոզները լրիվ հրահանգված լինեն: Հրահանգումը հարկավոր է կատարել ինչպես հատուկ խորհրդակցությունների միջոցով (աշխատանքի սկզբին), նույնպես և ամբողջ տարվա ընթացքում, հաճախակի այցելելով բոլոր գյուղխորհրդները և կոլխոզները:

20. Շրջնողրածինը պետք է անմիջապես մշակի ըստ առանձին գյուղխորհրդների տաննահինգ որյա հանվիտվությունների (ձև № 2-ի) ստացման ժամկետները: Ժամանակը նշանակելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ այս կամ այն գյուղերի հեռավորությունը շրջանի կենտրոնից, կապի դրությունը և այնպես դասավորել վորք վոր շրջնողրածինը ապահովված լինի իր ժամանակին (այն է յուրաքանչյուր ամսի 15-ին և 30-ին) ամբողջ շրջանի սովյալները լիովին հաղորդի Հոգժովկումատ:

Ժամկետների մասին շրջնողրածինը պարտավոր է անմիջապես հայտնել բոլոր գյուղխորհրդներին, կոլխոզներին, խորհրդային տնտեսություններին և մնացած դիտողություն կատարող ցանցին:

21. Շրջնողրածինը պետք է լայն կամպանիա տանի, վորպեսզի բոլոր գյուղխորհրդներն ընդգրկվեն սոցմրցման և հարվածային աշխատանքների մեջ:

22. Շրջնողրածինը պարտավոր է ամբողջ տարվա ընթացքում անհրաժեշտ հսկողություն ունենալ գյուղխորհրդների, կոլխոզների, Մ.Տ.Կ-ի, սովխոզների կողմից կատարվող աշխատանքի վորակի և ժամկետներին ներկայացնելու նկատմամբ:

23. Պտղաժուռ ծառերից սպասվող բերքատվության չափը վորոշվում է բերքատու հասակում գտնվող մեկ ծառից, անկախ այն հանգամանակից, թե փաստացի բերք տվել է թե վոր:

Որինակ սովյալ տարում խնձորենիների ընդհանուր ծառերի թվի $\frac{1}{3}$ մասը բերք չի տալու, հնայած նրան, վոր այդ $\frac{1}{3}$ մասը նույնպես գտնվում է բերքատու հասակում, իսկ մնացած $\frac{2}{3}$ մասը տալիս է միջին հաշվով յուրաքանչյուր ծառից մեկ ցենտներ

բերք: Հիմա, յեթե բերքը վորոշվի այն հաշվով, վոր յուրաքանչյուր բերքատվության հասակում յեղած ծառը տալիս է մեկ ցենտներ, ապա այդ կլինի սխալ, վորովհետե մեկ ցենտները, ինչպես մենք տեսանք, տալիս է միայն այս տարի փաստորեն բերք տվող ծառը: Հետևաբար, հարկավոր է բերքատվության չափը վորոշելիս հաշվի առնել նաև բերքատու հասակում գտնվող այն $\frac{1}{3}$ մասի ծառերի թիվը, վորոնք այս տարի բերք չեն տալու: Այդ դեպքում արդեն, սովյալ ժամկետին, փոխանակ մեկ ծառից մեկ ցենտներ վորոշելու, պիտի վորոշվի $\frac{1}{3}$ -ով պակաս, այսինքն, $\frac{2}{3}$ ցենտներ կամ 0,67 ցենտներ:

Վորպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր ծառապտուղի չափը վորոշելուց հետո ունենալ նաև ընդհանուր արտադրանքը, հարկավոր է, վոր յուրաքանչյուր սեկտոր հաշվի առնի իր ունեցած, բերքատու հասակում գտնվող պտղատու ծառերի քանակը, ըստ առանձին տեսակների, միաժամանակ վորոշելով այդպիսիների այն մասը, վորոնցից այս տարի բերք չի ծագավում:

24. Խաղողի բերքատվությունը վորոշվում է մեկ հեկտարից բերքատու հասակում գտնվող այգիներից:



77

С. А. 516

1
2

ИНСТИТУТ
ПОСТУПОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



«Ազգային գրադարան»

NL0280216

15 133